# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում / վերլուծություն/

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 137657 գործարքներ, որոնց քանակը, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 12.5%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 35187 օտարման գործարքների 74.2%-ը կազմել են առուվաճառքները, 25.3%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների 40.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 5.4%-ով: 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 10639 առուվաճառքի գործարքների 60.3%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.3%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

| **Վարչական շրջաններ** | **Միջին գները /դրամ/** | |
|---|---|---|
| | **9 ամիս 2012թ.** | **9 ամիս 2013թ.** |
| **Կենտրոն** | 409100 | 426700 |
| **Արաբկիր** | 339000 | 354600 |
| **Քանաքեռ-Զեյթուն** | 266100 | 281600 |
| **Նոր-Նորք** | 229400 | 249100 |
| **Ավան** | 239100 | 257900 |
| **Էրեբունի** | 236300 | 247600 |
| **Շենգավիթ** | 235000 | 253400 |
| **Դավթաշեն** | 259900 | 273000 |
| **Աջափնյակ** | 226700 | 245900 |
| **Մալաթիա-Սեբաստիա** | 225000 | 238700 |
| **Նուբարաշեն** | 140300 | 150100 |
| **Միջինը Երևանում** | ***255100*** | ***270800*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 6.2%-ով

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3285 բնակարաններ, որոնց քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.0%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | |
|---|---|---|---|
| | | **9 ամիս 2012թ.** | **9 ամիս 2013թ.** |
| Արագածոտն | Աշտարակ | 110900 | 114600 |
| | Ապարան | 49000 | 55800 |
| | Թալին | 61200 | 63700 |
| Արարատ | Արտաշատ | 91700 | 94700 |
| | Մասիս | 107900 | 114300 |
| | Վեդի | 96600 | 99200 |
| | Արարատ | 72900 | 75100 |
| Արմավիր | Վաղարշապատ | 151300 | 153900 |
| | Արմավիր | 177100 | 120700 |
| | Մեծամոր | 85900 | 87300 |
| Գեղարքունիք | Սևան | 97700 | 99100 |
| | Գավառ | 52800 | 58900 |
| | Մարտունի | 104500 | 107600 |
| | Վարդենիս | 34600 | 43800 |
| | Ճամբարակ | 21800 | 27500 |
| Լոռի | Վանաձոր | 85400 | 88200 |
| | Ստեփանավան | 74200 | 74500 |
| | Սպիտակ | 99900 | 99800 |
| | Ալավերդի | 50500 | 54900 |
| | Տաշիր | 42000 | 46200 |
| | Թումանյան | 11200 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 |
| | Ախթալա | 19600 | 20000 |
| Կոտայք | Աբովյան | 151300 | 154400 |
| | Նոր Հաճն | 128100 | 128500 |
| | Բյուրեղավան | 107000 | 107900 |
| | Եղվարդ | 108500 | 109300 |
| | Հրազդան | 58800 | 63500 |
| | Ծաղկաձոր | 293600 | 292500 |
| | Չարենցավան | 83300 | 85300 |
| Շիրակ | Գյումրի | 106600 | 109300 |
| | Արթիկ | 64100 | 66400 |
| | Մարալիկ | 36100 | 40100 |
| Սյունիք | Գորիս | 115100 | 120200 |
| | Կապան | 89200 | 91700 |
| | Սիսիան | 80400 | 90500 |
| | Մեղրի | 67600 | 79100 |
| | Ագարակ | 41200 | 45700 |
| | Քաջարան | 96100 | 94400 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 |
| Վայոց Ձոր | Վայք | 83900 | 94100 |
| | Եղեգնաձոր | 118300 | 122500 |
| | Ջերմուկ | 98800 | 111600 |
| Տավուշ | Դիլիջան | 101900 | 111900 |
| | Իջևան | 112200 | 117800 |
| | Բերդ | 50100 | 59400 |
| | Նոյեմբերյան | 41400 | 48500 |
| | Այրում | 24600 | 30800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 4.9%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3639 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 989, մարզերում միասին վերցրած՝ 2650: 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 5.9%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 0.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 8.2%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | |
|---|---|---|
| | 9 ամիս 2012թ. | 9 ամիս 2013թ. |
| **Կենտրոն** | 461700 | 475000 |
| **Արաբկիր** | 368200 | 381900 |
| **Քանաքեռ Զեյթուն** | 278300 | 294100 |
| **Նորք Մարաշ** | 304800 | 318100 |
| **Ավան** | 256300 | 269800 |
| **Էրեբունի** | 225300 | 238600 |
| **Շենգավիթ** | 242900 | 254200 |
| **Դավթաշեն** | 261300 | 275100 |
| **Աջափնյակ** | 238000 | 248900 |
| **Մալաթիա Սեբաստիա** | 224800 | 237200 |
| **Նուբարաշեն** | 144600 | 149800 |
| **Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)** | ***273300*** | ***285700*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը,/ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 4.5 %-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | |
|---|---|---|---|
| | | 9 ամիս 2012թ. | 9 ամիս 2013թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 132000 | 136000 |
| | Ապարան | 52500 | 59700 |
| | Թալին | 69100 | 69000 |
| Արարատ | Արտաշատ | 98800 | 99700 |
| | Մասիս | 111500 | 114900 |
| | Վեդի | 100000 | 102000 |
| | Արարատ | 87500 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 149400 | 152900 |
| | Արմավիր | 102600 | 106900 |
| Գեղարքունիք | Սևան | 92400 | 94700 |
| | Գավառ | 49800 | 57100 |
| | Մարտունի | 91600 | 95700 |
| | Վարդենիս | 34000 | 40500 |
| | Ճամբարակ | 26000 | 30700 |
| Լոռի | Վանաձոր | 96400 | 99800 |
| | Ստեփանավան | 87200 | 89700 |
| | Սպիտակ | 112400 | 113900 |
| | Ալավերդի | 45000 | 49500 |
| | Տաշիր | 50600 | 51900 |
| | Թումանյան | 12200 | 12000 |
| | Շամլուղ | 13200 | 13800 |
| | Ախթալա | 29400 | 29900 |
| Կոտայք | Աբովյան | 149900 | 156200 |
| | Նոր Հաճն | 128900 | 129800 |
| | Բյուրեղավան | 120000 | 120400 |
| | Եղվարդ | 115200 | 116100 |
| | Հրազդան | 78200 | 82500 |
| | Ծաղկաձոր | 304400 | 305000 |
| | Չարենցավան | 79300 | 82900 |
| Շիրակ | Գյումրի | 116500 | 118400 |
| | Արթիկ | 60700 | 63100 |
| | Մարալիկ | 48400 | 51900 |
| Սյունիք | Գորիս | 126900 | 129800 |
| | Կապան | 98000 | 99700 |
| | Սիսիան | 88700 | 95700 |
| | Մեղրի | 75300 | 84100 |
| | Ագարակ | 46000 | 46900 |
| | Դաստակերտ | 11600 | 11600 |
| Վայոց Ձոր | Վայք | 82800 | 89700 |
| | Եղեգնաձոր | 111300 | 116600 |
| | Ջերմուկ | 120300 | 130700 |
| Տավուշ | Դիլիջան | 105400 | 112300 |
| | Իջևան | 120400 | 122700 |
| | Բերդ | 57800 | 59700 |
| | Նոյեմբերյան | 46000 | 47700 |
| | Այրում | 34400 | 35700 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին

գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 3.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 11319 միավոր /5150.80 հա/ հողեր, որից Երևանում՝ 1245 միավոր /106.37 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5913 միավոր /4692.58 հա/, որից Երևանում՝ 48 միավոր /41.67 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 3712 միավոր /301.93 հա/, որից Երևանում՝ 679 միավոր /28.28 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1466 միավոր /94.20 հա/, որից Երևանում՝ 494 միավոր /33.62 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 128 միավոր /35.37 հա/, որից Երևանում՝ 24 միավոր /2.79 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 51 միավոր /22.70 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 41 միավոր /3.68 հա/,
- ջրային հողեր՝ 8 միավոր /0.33 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 9217 միավորի /4071.71 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1061 միավոր /61.33 հա/, նվիրատվության գործարքներ՝ 2020 միավոր /1070.10 հա/, որից Երևանում՝ 155 միավոր /42.27 հա/ և փոխանակության գործարքներ՝ 82 միավոր /9.00 հա/, որից Երևանում՝ 29 միավոր /2.77 հա/:

Հանրապետությունում 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.6%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 3.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4.3%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1024.62 հա, որից 984.90 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.4%-ը կամ 2523 գործարքներ /787.03 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 628 միավոր /20.40 հա/, իսկ 71.6%-ը կամ 6599 միավորը /3259.55 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 430 միավոր /40.92 հա/: 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 95 գործարք /25.12 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր: բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | Բնակավայրերի հողեր: հասարակական կառուցապատ. հողերի | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր: բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | Բնակավայրերի հողեր: հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 9 | 0.68 | 302 | 4.47 | 317 | 15.25 | 36 | 7.26 | 15 | 2.11 | 260 | 18.25 | 119 | 13.30 |
| Արագածոտն | 341 | 206.11 | 4 | 0.27 | 22 | 0.92 | 107 | 7.39 | 662 | 413.78 | 1 | 0.07 | 201 | 21.86 | 16 | 1.36 |
| Արարատ | 76 | 95.77 | 5 | 1.05 | 50 | 3.47 | 58 | 1.31 | 559 | 339.87 | 10 | 2.33 | 352 | 29.51 | 40 | 0.84 |
| Արմավիր | 43 | 121.03 | 5 | 0.48 | 12 | 0.66 | 42 | 0.92 | 692 | 863.87 | 2 | 0.02 | 363 | 36.72 | 22 | 0.88 |
| Գեղարքունիք | 18 | 43.07 | 4 | 5.17 | 102 | 8.13 | 49 | 4.03 | 403 | 252.19 | 2 | 0.13 | 137 | 17.02 | 10 | 1.26 |
| Լոռի | 7 | 1.06 | 11 | 1.42 | 50 | 1.99 | 75 | 1.46 | 241 | 145.96 | 5 | 1.59 | 71 | 8.77 | 20 | 0.25 |
| Կոտայք | 101 | 132.83 | 9 | 0.83 | 146 | 6.93 | 129 | 4.38 | 699 | 377.29 | 7 | 7.57 | 580 | 47.45 | 79 | 8.75 |
| Շիրակ | 8 | 4.53 | 2 | 0.22 | 49 | 1.54 | 38 | 1.45 | 261 | 241.18 | 3 | 0.74 | 104 | 12.78 | 16 | 0.57 |
| Սյունիք | 12 | 41.09 | 11 | 5.58 | 12 | 0.17 | 30 | 0.93 | 162 | 155.68 | 2 | 0.02 | 30 | 2.66 | 17 | 1.12 |
| Վայոց Ձոր | 33 | 28.26 | 8 | 1.56 | 18 | 1.24 | 21 | 0.30 | 81 | 140.59 | 0 | 0.00 | 62 | 6.80 | 6 | 0.16 |
| Տավուշ | 19 | 9.45 | 5 | 1.33 | 53 | 3.71 | 54 | 6.49 | 115 | 47.59 | 1 | 0.11 | 77 | 6.85 | 24 | 7.08 |
| Ընդամենը | 658 | 683.20 | 73 | 18.59 | 816 | 33.23 | 920 | 43.91 | 3911 | 2985.26 | 48 | 14.69 | 2237 | 208.67 | 369 | 35.57 |

Ստորև ներկայացվում է 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Աճուրդ վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբ օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր: բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | Բնակավայրերի հողեր: հասարակական կառուցապ. հողերի | | Ընդամենը | | Գյուղ. նշանա-կության հողերի | | Գյուղ. նշանա-կության հողերի | | Բնակավայրերի հողեր: բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | Բնակավայրերի հողեր: հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 482 | 9.89 | 8 | 0.48 | 278 | 2.69 | 196 | 6.72 | 146 | 10.51 | 0 | 0.00 | 1 | 0.20 | 24 | 1.78 | 121 | 8.53 |
| Արագածոտն | 95 | 5.46 | 2 | 0.19 | 14 | 0.27 | 79 | 5.00 | 94 | 124.10 | 56 | 120.99 | 2 | 0.08 | 8 | 0.65 | 28 | 2.38 |
| Արարատ | 14 | 0.33 | 0 | 0.00 | 5 | 0.21 | 9 | 0.12 | 170 | 97.43 | 71 | 91.93 | 5 | 1.05 | 45 | 3.26 | 49 | 1.19 |
| Արմավիր | 19 | 0.53 | 1 | 0.10 | 5 | 0.15 | 13 | 0.28 | 81 | 121.65 | 41 | 120.11 | 4 | 0.38 | 7 | 0.52 | 29 | 0.64 |
| Գեղարքունիք | 23 | 1.48 | 0 | 0.00 | 20 | 1.22 | 3 | 0.26 | 148 | 57.17 | 16 | 41.32 | 4 | 5.17 | 82 | 6.91 | 46 | 3.77 |
| Լոռի | 39 | 1.08 | 3 | 0.82 | 13 | 0.08 | 23 | 0.18 | 103 | 4.35 | 6 | 0.56 | 8 | 0.60 | 37 | 1.91 | 52 | 1.28 |
| Կոտայք | 25 | 2.10 | 1 | 0.10 | 14 | 0.84 | 10 | 1.16 | 353 | 142.20 | 94 | 132.17 | 8 | 0.73 | 132 | 6.08 | 119 | 3.22 |
| Շիրակ | 34 | 0.77 | 0 | 0.00 | 20 | 0.43 | 14 | 0.34 | 63 | 6.97 | 8 | 4.53 | 2 | 0.22 | 29 | 1.11 | 24 | 1.11 |
| Սյունիք | 10 | 3.10 | 3 | 3.02 | 3 | 0.05 | 4 | 0.03 | 55 | 44.68 | 12 | 41.09 | 8 | 2.57 | 9 | 0.12 | 26 | 0.90 |
| Վայոց Ձոր | 6 | 0.043 | 0 | 0.00 | 1 | 0.003 | 5 | 0.04 | 73 | 29.77 | 32 | 26.72 | 8 | 1.56 | 17 | 1.23 | 16 | 0.26 |
| Տավուշ | 9 | 0.60 | 0 | 0.00 | 4 | 0.09 | 5 | 0.51 | 122 | 20.38 | 19 | 9.45 | 5 | 1.33 | 49 | 3.62 | 49 | 5.98 |
| Ընդամենը | 756 | 25.38 | 18 | 4.71 | 377 | 6.03 | 361 | 14.64 | 1408 | 659.21 | 355 | 588.87 | 55 | 13.89 | 439 | 27.19 | 559 | 29.26 |

Հանրապետությունում 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 303 գործարքներ /94.33 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 3.2%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2.1 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 2.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 5.6%-ով, բնակելի կառուցապաման

/տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 10.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 27.3%-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 37 | 86.50 | 22.3 | 7609.5 | 491.1 | 370 | 144.94 | 365.0 | 12000.0 | 3612.2 |
| Ապարան | 4 | 1.54 | 137.5 | 2982.9 | 1166.5 | 68 | 37.25 | 86.5 | 2727.3 | 731.3 |
| Թալին | 13 | 29.70 | 37.7 | 640.0 | 85.6 | 143 | 102.28 | 93.6 | 5494.5 | 665.2 |
| Ծաղկահովիտ | 2 | 3.26 | 193.2 | 381.4 | 287.3 | 53 | 110.22 | 79.5 | 1000.0 | 275.4 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 10 | 14.60 | 81.0 | 5555.6 | 3285.2 | 260 | 77.58 | 335.1 | 10833.3 | 2811.7 |
| Մասիս | 41 | 45.79 | 47.3 | 2104.0 | 628.1 | 150 | 115.67 | 200.0 | 11904.8 | 3112.7 |
| Վեդի | 20 | 31.55 | 33.3 | 4495.2 | 460.1 | 137 | 141.45 | 207.0 | 10795.1 | 1844.6 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 19 | 82.42 | 60.4 | 1059.2 | 247.4 | 348 | 219.94 | 294.3 | 9090.0 | 1362.3 |
| Բաղրամյան | 8 | 17.35 | 70.9 | 70.9 | 70.9 | 99 | 478.63 | 90.6 | 2561.1 | 774.9 |
| Վաղարշապատ | 14 | 20.33 | 69.1 | 1244.3 | 459.8 | 206 | 116.61 | 444.4 | 11764.7 | 2326.8 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 5 | 9.97 | 117.6 | 700.0 | 483.0 | 250 | 75.44 | 199.8 | 1875.0 | 421.2 |
| Ճամբարակ | 2 | 0.61 | 180.6 | 479.6 | 330.1 | 73 | 51.81 | 60.5 | 953.3 | 353.3 |
| Մարտունի | | | | | | 13 | 2.23 | 51.1 | 2850.0 | 737.8 |
| Սևան | 8 | 30.70 | 117.9 | 1221.0 | 763.7 | 2 | 0.74 | 52.2 | 2134.8 | 318.5 |
| Վարդենիս | 1 | 0.04 | 55.0 | 55.0 | 55.0 | 62 | 118.16 | 41.2 | 2575.1 | 416.9 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 2 | 0.21 | 490.1 | 2446.3 | 1468.2 | 36 | 18.88 | 170.4 | 6424.2 | 594.8 |
| Գուգարք | | | | | | 64 | 19.72 | 234.6 | 6065.9 | 762.8 |
| Սպիտակ | | | | | | 12 | 3.58 | 250.0 | 5555.5 | 731.1 |
| Ստեփանավան | 4 | 0.35 | 606.2 | 710.7 | 661.3 | 48 | 39.90 | 90.6 | 1686.6 | 322.5 |
| Տաշիր | | | | | | 66 | 33.26 | 45.3 | 1384.4 | 156.4 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 41 | 45.22 | 75.1 | 3086.7 | 505.1 | 270 | 130.26 | 279.3 | 11942.7 | 4393.7 |
| Եղվարդ | 42 | 62.76 | 68.9 | 2121.2 | 444.6 | 284 | 160.28 | 174.4 | 11971.8 | 2587.3 |
| Հրազդան | 11 | 24.19 | 147.5 | 1335.4 | 859.8 | 138 | 74.70 | 130.5 | 10256.4 | 1646.2 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 4 | 2.24 | 66.1 | 687.5 | 301.9 | 88 | 62.92 | 252.0 | 1693.1 | 622.7 |
| Ամասիա | | | | | | 13 | 38.46 | 40.9 | 261.0 | 127.2 |
| Անի | | | | | | 61 | 72.50 | 110.6 | 546.9 | 385.3 |
| Աշոցք | 3 | 1.44 | 66.6 | 238.9 | 124.5 | 25 | 22.44 | 58.5 | 215.8 | 127.4 |
| Արթիկ | 1 | 0.84 | 420.0 | 420.0 | 420.0 | 74 | 44.86 | 79.4 | 1428.6 | 414.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 4 | 2.50 | 149.9 | 150.1 | 150.0 | 40 | 30.88 | 92.6 | 1023.2 | 724.9 |
| Կապան | 8 | 38.59 | 137.5 | 621.0 | 401.9 | 20 | 11.68 | 120.0 | 841.6 | 357.7 |
| Մեղրի | | | | | | 19 | 2.69 | 193.0 | 3000.0 | 730.8 |
| Սիսիան | | | | | | 81 | 110.11 | 46.3 | 1977.4 | 542.9 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 20 | 11.80 | 35.4 | 633.7 | 170.4 | 49 | 117.19 | 125.0 | 10000.0 | 1913.3 |
| Վայք | 12 | 14.92 | 64.1 | 8505.0 | 966.5 | 31 | 23.07 | 58.8 | 1430.7 | 631.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 44 | 11.58 | 213.3 | 3783.8 | 682.6 |
| Իջևան | 13 | 6.35 | 154.0 | 550.0 | 339.5 | 21 | 11.19 | 267.5 | 9454.5 | 1243.2 |
| Նոյեմբերյան | 6 | 3.11 | 151.7 | 4802.4 | 1445.0 | 49 | 23.84 | 46.7 | 7368.4 | 877.4 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 4 | 2348.0 | 112.7 | 3183.4 | 1595.1 | 160 | 148936.2 | 130.7 | 22200.0 | 2576.7 |
| Ապարան | 2 | 2188.0 | 176.9 | 452.0 | 314.5 | 18 | 20230.0 | 124.1 | 609.6 | 389.9 |
| Թալին | 2 | 1937.0 | 213.2 | 213.2 | 213.2 | 14 | 24984.0 | 63.2 | 1454.8 | 152.4 |
| Ծաղկահովիտ | | | | | | 8 | 21198.8 | 60.0 | 214.3 | 89.4 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 6 | 6084.8 | 145.0 | 849.7 | 405.6 | 104 | 100940.6 | 173.9 | 7140.3 | 896.1 |
| Մասիս | 37 | 25912.2 | 891.1 | 3693.8 | 1484.5 | 173 | 113997.4 | 187.5 | 25000.0 | 1209.5 |
| Վեդի | 2 | 608.3 | 840.9 | 1614.6 | 1227.8 | 74 | 79069.4 | 126.1 | 5000.0 | 661.1 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 140 | 158504.6 | 131.6 | 9090.9 | 1214.4 |
| Բաղրամյան | 1 | 1200.0 | 233.1 | 233.1 | 233.1 | 8 | 10882.0 | 100.0 | 833.3 | 239.8 |
| Վաղարշապատ | 6 | 3989.9 | 95.9 | 3828.0 | 1693.4 | 207 | 190038.3 | 197.4 | 26528.4 | 1529.1 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 22 | 25202.8 | 113.2 | 895.0 | 182.1 | 31 | 33952.7 | 186.6 | 1084.3 | 681.7 |
| Ճամբարակ | 2 | 2077.0 | 106.6 | 108.7 | 107.7 | 3 | 7859.0 | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | 51 | 39236.8 | 113.5 | 410.7 | 264.5 | 80 | 89430.9 | 119.3 | 5000.0 | 282.2 |
| Սևան | 4 | 1695.3 | 700.5 | 1802.1 | 1094.6 | 6 | 8346.5 | 240.0 | 3110.4 | 314.7 |
| Վարդենիս | 3 | 884.3 | 66.6 | 1200.0 | 622.2 | 16 | 28649.2 | 72.5 | 987.2 | 150.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 5 | 300.0 | 778.8 | 1650.0 | 1321.5 | 11 | 13627.0 | 114.3 | 1388.9 | 216.7 |
| Գուգարք | 21 | 7706.1 | 151.2 | 4976.6 | 2312.3 | 31 | 37560.7 | 77.9 | 14083.3 | 1238.7 |
| Սպիտակ | 8 | 9210.1 | 153.3 | 677.3 | 277.4 | 16 | 21318.0 | 104.9 | 1348.3 | 206.2 |
| Ստեփանավան | 2 | 1800.0 | 187.2 | 554.4 | 370.8 | 9 | 9229.3 | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | 1 | 82.0 | 587.8 | 587.8 | 587.8 | 4 | 5924.8 | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 99 | 33308.8 | 275.5 | 5854.1 | 2997.8 | 286 | 227120.3 | 264.5 | 35353.5 | 1989.8 |
| Եղվարդ | 30 | 25919.0 | 244.2 | 5471.4 | 2346.7 | 245 | 199825.3 | 173.6 | 27000.0 | 2855.6 |
| Հրազդան | 3 | 1589.0 | 1272.0 | 4750.0 | 2477.7 | 45 | 41142.5 | 117.7 | 34848.5 | 1318.2 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 9 | 2538.1 | 554.4 | 4882.0 | 2646.6 | 45 | 43834.4 | 113.6 | 18750.0 | 333.8 |
| Ամասիա | 1 | 416.0 | 165.4 | 165.4 | 165.4 | 1 | 2580.0 | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | 7 | 4400.0 | 133.2 | 404.6 | 302.5 | 14 | 18976.0 | 67.9 | 180.6 | 172.6 |
| Աշոցք | | | | | | 4 | 22330.0 | 40.8 | 144.0 | 63.3 |
| Արթիկ | 12 | 3778.6 | 279.2 | 3933.3 | 1176.3 | 39 | 39569.3 | 111.8 | 5000.0 | 217.0 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 5 | 5607.0 | 112.2 | 1700.0 | 367.9 |
| Կապան | 9 | 1198.0 | 1147.9 | 2900.0 | 1647.4 | 8 | 4136.0 | 67.9 | 2638.9 | 301.2 |
| Մեղրի | | | | | | 12 | 6664.9 | 68.5 | 632.9 | 210.6 |
| Սիսիան | | | | | | 5 | 10175.0 | 123.5 | 875.0 | 207.8 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 8 | 6830.0 | 64.8 | 1496.4 | 422.1 | 51 | 49334.7 | 96.7 | 7659.6 | 503.9 |
| Վայք | 9 | 5519.4 | 850.6 | 1312.5 | 944.0 | 10 | 17076.0 | 120.7 | 1448.3 | 218.7 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | 3 | 4862.0 | 45.0 | 1583.3 | 839.8 | 6 | 4169.5 | 75.8 | 810.0 | 116.0 |
| Իջևան | 43 | 29347.1 | 214.3 | 3000.0 | 2376.7 | 60 | 51285.6 | 74.1 | 14423.1 | 518.3 |
| Նոյեմբերյան | 3 | 2004.7 | 317.2 | 1100.2 | 644.8 | 10 | 11738.2 | 125.0 | 1948.1 | 228.0 |

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6327 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 71.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 1.7%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 452 բնակարանների, 670 անհատական բնակելի տների, 2772 հասարակական, 709 արտադրական նշանակության օբյեկտների, 1573 միավոր /10568.37 հա/ հողերի, 142 ավտոտնակների և 9 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 126 վարձակալության գործարքների, այդ թվում 77 միավոր /0.71 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 31.5%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 10568.37 հա հողերից 7.10 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 10561.27 հա հողերի 9148.81 հա գյուղատնտեսական նշանակության, 105.45 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 42.06 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4926.58 հա, որից 4907.10 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 16754 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.2%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 6.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.6%/, առանձնատների /23.6%/. հասարակական նշանակության օբյեկտների /11.1%/ և հողերի /7.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9290 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 11.7%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 1718.37 հա մակերեսով հողեր, որից 151.80 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 84.5%-ը կամ 1451.86 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 4.61 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 532.80 հա, որից 506.67 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1361 գործարքներ, որից 947-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 79.3%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.9%-ն՝ անհատական բնակելի տների, 2.9%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.2%-ն՝ ավտոտնակների, 1.3%-ն՝ ամառանոցների և 1.9%-ն՝ հողերի

նկատմամբ, որից 0.7%-ը՝ գյուղատնտեսական նշանակության: 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 39.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 56.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 11.3%-ով:

2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 15665 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.0%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն